ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԼՅՈՒԴՎԻԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Քաղաքական մշակույթի ընդհանրական պատկերը

Քաղաքագիտական հետազոտությունների գլխավոր ուղղություններից մեկը քաղաքական մշակույթն է: Այն այս կամ այն ձևով ազդում է մարդկանց վարքագծի և կազմակերպությունների գործունեության, տվյալ երկրի բնակչության կողմից ներքին և միջազգային քաղաքականության ընկալման, քաղաքական համակարգի և ռեժիմի գնահատման, քաղաքականության ոլորտում անհատի տեղի բացահայտման վրա: Հետևաբար, քաղաքական մշակույթի իմացությունը լայն հնարավորություններ է ստեղծում քաղաքական կանխատեսման և նպատակասլաց քաղաքականության իրականացման համար: «Քաղաքական մշակույթ» եզրույթի պարզաբանումը կարևոր է նաև ժողովրդավարության արդիականացման առումով, քանի որ այն նպաստում է հասկանալու, թե ինչպիսին պետք է լինի ժողովրդավարական հասարակության քաղաքական մշակույթը, և ինչպես կարելի է ազդել նրա կերպափոխումների վրա:

Քաղաքական մշակույթը բազմակողմանի երևույթ է: Այն արձանագրում է քաղաքական գիտելիքների, մարդկանց կողմնորոշումների, գնահատումների և գործողությունների մակարդակն ու բնույթը, հոգևոր արժեքների, ավանդույթների, նորմերի բովանդակությունն ու առանձնահատկությունները: Կարելի է ասել, որ քաղաքական մշակույթի գործառության ոլորտը հասարակության ողջ քաղաքական կյանքն է, որն ընդգրկում է հասարակական այն բոլոր հարաբերությունները, հայեցակետերը, գործունեության տիպերը, որոնք առնչվում են իշխանության իրականացմանն ու կառավարմանը: Այս առումով քաղաքական մշակույթը ներառում է քաղաքական գիտակցության, անհատների և սոցիալական հանրույթների քաղաքական վարքագծի, տվյալ համակարգի շրջանակներում գործող քաղաքական ինստիտուտների և կազմակերպությունների մշակույթները[1]: Անշուշտ, քաղաքական կյանքում դիտարկվող ոչ բոլոր համոզմունքները, պատկերացումները և վարքագծի մոդելներն են համարվում քաղաքական մշակույթի կա-

[1] Տե՛ս **Гаджиев К. С**. Политическая культура: концептуальный аспект // «Полис», 1991, № 6, էջ 6:

ռուցվածքային բաղադրատարրեր: Կարծում ենք, որ նաև սա է քաղաքական մշակույթի իմաստը կամ նրա այն յուրահատկությունը, որ քաղաքական մշակույթն ընդգրկում է գիտակցության և վարքի միայն այն դրսևորումները, որոնք արձանագրում են ավելի կայուն, կրկնվող կապեր քաղաքական գործընթացի բաղադրատարրերի միջև՝ դրանով իսկ ամրապնդելով քաղաքական պրակտիկայի ավելի կայուն կողմերը:

Մասնավորից գնալով դեպի ընդհանուրը՝ կարելի է առանձնացնել անհատի, սոցիալական խմբի, խավի, դասի, ազգային հանրույթի, հասարակության քաղաքական մշակույթները: Դրանցից յուրաքանչյուրի քաղաքական-մշակութային առանձնահատկությունները այս կամ այն կերպ կախված են ընտրությունների և հանրաքվեների ժամանակ նրանց քաղաքական վարքագծի վերլուծությունից, հանրային հարցումներից, քաղաքական ինստիտուտների նկատմամբ վերաբերմունքից, քաղաքական գիտելիքներից և փորձից, ազգային բնավորության և հոգեկերտվածքի բնույթից, արժեքային կողմնորոշումներից և քաղաքական վարքագծի օրինակներին հետևելու պատրաստակամությունից:

Քաղաքական մշակույթի որոշ բնութագրումներ սահմանափակում են քաղաքական մշակույթի ոլորտը քաղաքական գիտակցությամբ՝ չընդգրկելով քաղաքական վարքագծի օրինակները: Մյուս մասը, ընդհակառակը, այն համարում է քաղաքական գործունեություն, ինչն իր ամբողջության մեջ, մեր կարծիքով, այնքան էլ օրինաչափ չէ, քանի որ քաղաքական գործունեության ոչ բոլոր տեսակներն են կազմվում մշակույթի օրինակներին համապատասխան: Պարզ է, որ քաղաքական մշակույթը՝ որպես հասարակական երևույթ, գտնվում է քաղաքականության և մշակույթի հանգուցակետում: Քաղաքականությունը սոցիալական և էթնիկական տարբեր խմբերի միջև հարաբերությունների ոլորտ է, իշխանության վերափոխման և զարգացման միջոց: Օգտագործելով «մշակույթ» եզրույթը՝ մենք հասկանում ենք հասարակական կյանքի բոլոր ոլորտներում մարդու ակտիվ ստեղծագործական գործունեության ձևերի, սկզբունքների, միջոցների դինամիկ ամբողջությունը: Քաղաքական մշակույթն ազդում է իշխանության իրացման եղանակների վրա, իսկ նրա զարգացումը կախված է քաղաքական վերափոխումներից: Այսպես, օրինակ, քաղաքականությունը տոտալիտար (ամբողջատիրական) հասարակության պայմաններում ընդունակ է լրջորեն ձևափոխելու ամբողջ մշակույթի բովանդակությունը և գործառույթը, իսկ ժողովրդավարության պայմաններում՝ նպաստելու դրա զարգացմանը: Քաղաքականության վրա մշակույթի ազդեցության հիմնական ուղիներից մեկը անհատի սոցիալականացումն է, որը հնարավորություն է տալիս մասնակցելու քաղաքական կյանքին, ստեղծելու և ներդնելու արժեքների համակարգ, ձևավորելու որոշակի վարքագիծ,

ինստիտուտների և սոցիալական նորմերի մոդելներ[2]: Քաղաքական մշակույթը, հիմնվելով քաղաքականության և մշակույթի վրա, ներառում է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրեր: Օբյեկտիվ են իրականում գործող քաղաքական հարաբերությունները, իշխանության ինստիտուտները, քաղաքական արժեքները, ավանդույթները և նորմերը, որոնցով կարգավորվում են նաև քաղաքական հարաբերությունները: Այս ամենի հետ մեկտեղ՝ քաղաքական մշակույթն ընդգրկում է նաև սոցիալական սուբյեկտների, տարբեր քաղաքական շարժումների քաղաքական գիտակցության որոշակի մակարդակ, ինչպես նաև նրանց ընդունակությունը՝ կատարելու որոշակի քաղաքական գործողություններ: Քաղաքական մշակույթի սուբյեկտիվ կողմ են համարվում հասարակության քաղաքական-մշակութային արժեքների յուրացման գործընթացում ձևավորված մարդու գաղափարական և հոգեբանական, հուզական-կամային բաղադրիչները:

Ժամանակակից քաղաքական գիտությունում գոյություն ունի «քաղաքական մշակույթ» եզրույթի սահմանման լայն ընդգրկում: Երբեմն դա բացատրվում է այն հանգամանքով, որ, ինչպես նշում է ռուս քաղաքագետ Էդվարդ Բատալովը, «չնայած այն բանին, որ քաղաքական մշակույթի տարբեր հիմնահարցեր՝ Կոնֆուցիոսի (Ք. ա. 551-479) և Պլատոնի (Ք. ա. 427-347) ժամանակներից սկսած, քննարկվում են որպես ամբողջական երևույթ, որն ունի ինքնուրույն կարգավիճակ, այն գիտության կողմից սկսվեց ընդունվել միայն ոչ վաղ անցյալում»[3]:

«Քաղաքական մշակույթ» եզրույթի քննարկումներին, նրա սահմանման վերաբերյալ տարբեր մոտեցումներին անդրադառնալիս[4] պետք է նկատի ունենալ, որ այդ հասկացությունը շատ տարածված է և՛ քաղաքական գիտությունում, և՛ հանրամատչելի հասարակաքաղաքական գրականությունում, և՛ առօրյա-խոսակցական մակարդակներում:

Ահա, վերոնշյալ մոտեցումների հիման վրա *քաղաքական մշակույթը կարող է սահմանվել որպես պատմականորեն ձևավորված, հարաբերականորեն կայուն, նախորդ սերունդների փորձն ընդգրկող դիրքորոշումների, համոզմունքների, պատկերացումների և վարքի մոդելների մի համակարգ, որն արտացոլվում է քաղաքական համակարգի սուբյեկտների անմիջական գործունեության մեջ:* Ավելի ամփոփ կարելի է սահմանել, որ *քաղաքական մշակույթը քաղաքական գիտելիքնե-*

---

[2] Տե՛ս **Дахин В.** Политическая культура и власть // «Свободная мысль», 1996, № 1:

[3] **Баталов Э.** Политическая культура современного американского общества. М., 1990, էջ 10, տե՛ս նաև **Almond G.,** Comparative Political System. «Journal of Politics» 18 (August), 1956, **Almond G., Verba S.,** The Civil Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. Princeton Univ. Press, 1963, **Pye L. W.,** and **Verba S**. (eds.), Political Calture and Political Devlopment. Princeton Univ. Press, 1965:

[4] Մանրամասն տե՛ս **Լ. Վարդանյան, Խ. Մակյան,** Դիտարկումներ «քաղաքական մշակույթ» եզրույթի ծագման և մեկնաբանության վերաբերյալ, «ՎԷմ», 2016, թիվ 4 (56):

րի, համոզմունքների և սկզբունքների ամբողջություն է, որը դրսևորվում է մարդկանց քաղաքական գործունեության եղանակներում և արդյունքներում: Այս մոտեցմամբ քաղաքական մշակույթը չի նույնացվում միայն գիտելիքներին և համոզմունքներին. այն բովանդակում է նաև այդ գիտելիքների, արժեքային կողմնորոշումների, քաղաքական սուբյեկտների վարքագծի օրինակների իրականացման եղանակները:

Կողմնորոշումները՝ որպես քաղաքական մշակույթի կառուցվածքային բաղադրիչներ

Յուրաքանչյուր քաղաքական մշակույթի բնույթը շատ դեպքերում պայմանավորված է նրա կառուցվածքով, որն էլ ձևավորվում է այս կամ այն բաղադրիչների ազդեցությամբ, որոնք էլ իրենց հերթին քաղաքականության ոլորտում պայմանավորում են մարդկանց արժեքային-իմաստային գործունեությունը: Այսինքն՝ անհրաժեշտ է արտացոլել քաղաքականության ոլորտում մարդու գործունեության արժեքային-իմաստային ներդաշնակությունը, իշխանության հետ կապված շահերի ընկալման առանձնահատկությունները, նպատակներին հասնելու համար առաջնորդվել ոչ միայն քաղաքական խաղի օրենքներով, այլև ստեղծագործաբար վերադասավորել գործունեության միջոցները արտաքին հանգամանքների փոփոխման պայմաններում:

Քաղաքական մշակույթը կառուցվածքային առումով բավականին բարդ, բազմամակարդակ կազմավորում է, ինչը բացատրվում է սոցիալ-քաղաքական տարբեր գործընթացների հետ փոխհարաբերությունների բազմազանությամբ: Բաղադրիչների մի մասն արտահայտում է սուբյեկտների քաղաքական վարքագծի ձևավորման տեխնոլոգիան, մյուս մասը՝ կոնկրետ երկրում քաղաքական մշակույթի կայացման փուլերը, նաև այն արժեքները, որոնցով առաջնորդվում են էլիտաներն ու էլեկտորատը (ընտրազանգվածը), էթնոսները, առանձին տարածաշրջանի բնակիչները և այլն: Քաղաքական մշակույթի կառուցվածքային բաղադրատարրերի ամբողջությունն այն մեխանիզմն է, որի միջոցով ձևավորվում և իրականացվում են նպատակաուղղված քաղաքական գործողությունները, կարգավորվում են քաղաքական հարաբերությունները[5]:

Մարդու ինքնանույնացումը և կողմնորոշումը քաղաքականության մեջ հիմնված են նրա մարդաբանական (այդ թվում՝ աշխարհայացքային) բնութագրիչ կողմերի վրա: Այս իմաստով քաղաքական մշակույթը կազմված է *ռացիոնալ* և *իռացիոնալ* բաղադրիչներից: Եթե ռացիոնալ բաղադրիչները ենթադրում են, որ մարդը գործում է իր շահերին, կարգավիճակին համապատասխան, բանականորեն համադրում

[5] Տե՛ս **Լ. Վարդանյան,** Քաղաքական մշակույթ // Քաղաքագիտություն: Ուսումնական ձեռնարկ, Եր., ԵՊՀ հրատ., 2006, էջ 452:

է դրանց հասնելու նպատակները և միջոցները, ապա մարդու կողմնորոշման իռացիոնալ բաղադրիչների առկայությունը կապված է աշխարհի հուզական-զգայական ընկալման, մտածողության ոչ քննադատական արքետիպերի, նախապաշարմունքների, նախահամոզմունքների և այլնի հետ: Մարդու գիտակցության մեջ իռացիոնալ բաղադրիչի առկայությունը, որը հաճախ խեղաթյուրում է մարդկանց վարքագծի տրամաբանությունը, դժվարացնում է քաղաքական մշակույթի կազմավորման և գործառության բացատրությունը:

Սոցիալական գիտություններում չափազանց ազդեցիկ *ֆենոմենոլոգիական դպրոցը* ռացիոնալությունը համարում է ոչ թե մարդու վարքագծի օբյեկտիվ բնութագրիչ, այլ սուբյեկտիվ և հաճախ իրավիճակային երևույթ: Այսպես, գիտական գործունեության ընթացքում, առավելապես հենվելով Մարտին Հայդեգերի, Մաքս Վեբերի, Ջորջ Միդի և մյուսների գաղափարների վրա, ավստրո-ամերիկացի փիլիսոփա Ալֆրեդ Շյուցն առաջ քաշեց *հասկացող սոցիոլոգիայի* սեփական մոտեցումը: Այդ մոտեցումը ենթադրում է սոցիալական աշխարհի վերաբերյալ մարդկային պատկերացումների ձևավորման գործընթաց, առանձին սուբյեկտիվ նշանակություններից մինչև սոցիալական գիտությունների բարձր համախմբվածությամբ ինտերսուբյեկտիվորեն հիմնավորված կառուցվածքներ, որոնք, վերափոխված «երկրորդային» ձևով, պարունակում են այդ նշանակությունները[6]: Ալֆրեդ Շյուցը ցույց է տալիս, թե ինչպես են մարդկային փորձի անխուսափելի սահմանափակությունը և յուրահատկությունը հաղթահարվում առօրյա փոխհարաբերությանը բնորոշ իդեալականացումների («օբյեկտների նույնության» և «տեսակետների փոխարինելիության») շնորհիվ, որոնց ազդեցությամբ ձևավորվում է օբյեկտների, անհատների, առօրյայում գործունեության դրդապատճառների ընկալումների ստանդարտացված (ձևայնացված) տիպաբանական կառուցվածք: Առօրյա տիպերը (առաջին կարգի կառուցվածքները) օբյեկտիվ գիտական հասկացությունների (երկրորդ կարգի կառուցվածքների) ձևավորման հիմքն են կազմում: Ըստ Ա. Շյուցի՝ գիտական գիտելիքի ոլորտը տարբեր «նշանակությունների ավարտուն ոլորտներից» է, տարբեր «փորձի աշխարհներից» մեկը, որոնցից յուրաքանչյուրին կարելի է վերագրել իրականության հատկանիշ, որակ: Նմանատիպ այլ աշխարհներից են գեղարվեստական երևակայության, կրոնական հավատալիքների, հոգեկան հիվանդության և այլ աշխարհները: Դրանցից յուրաքանչյուրը փորձի համախմբություն է: Ա. Շյուցը ձգտում է ցույց տալ, որ մարդկային ակտիվությունն առավել ամբողջական և հաջորդաբար իրագործվում է առօրեականության աշխարհում: Առօրեականությունը մարդկային փորձի ոլորտներից մեկն է: Այն բնորոշվում է ընկալման ձևերով և աշխարհի իմաստավորմամբ,

[6] Տե՛ս **Шюц А.** Смысловая структура повседневного мира: очерки по феноменологической социологии. М., 2003, էջ 227:

որն առաջ է գալիս աշխատանքի արդյունքում: Որպես այդպիսին՝ առօրեականությունը «բարձրագույն իրականություն» է և հիմք, որի միջոցով էլ ձևավորվում են մյուս փորձերի աշխարհները[7]: Օգտագործելով այս ելակետային դրույթը՝ տվյալ ուղղության ներկայացուցիչներ Պիտեր Բերգերը, Մորիս Նաթանսոնը և ուրիշներ զգալի ներդրում են ունեցել քաղաքական երևույթների ձևավորման ընթացքի մեջ սուբյեկտիվ պատկերացումների դինամիկայի, քաղաքական գործողություններին բնորոշ շարժառիթների և անհատային տիպերի նկարագրությունների ուսումնասիրման բնագավառում:

Ներկայացված մոտեցումների հիման վրա անդրադառնալով քաղաքականության աշխարհին՝ պետք է նշել, որ մարդկային բազմադարյան պատմությունը ձևավորել է մարդու կողմից քաղաքականության աշխարհի ըմբռնման որոշակի մակարդակներ, որոնցից առաջինը հենց առօրյա-գիտակցական մակարդակն է՝ որպես անմիջական քաղաքական փորձի ընդհանրացում: Ա. Շյուցի խոսքերով ասած՝ «քաղաքականության այս առօրեականության աշխարհը» կազմում է զանգվածային քաղաքական գիտակցության անքակտելի բաղադրամասը: Արտացոլելով քաղաքական երևույթների առավելապես արտաքին, պրակտիկ կողմը՝ առօրյա գիտելիքները մարդկանց մեջ ուղղորդում և ձևավորում են որոշակի կողմնորոշումներ քաղաքական երևույթների, քաղաքական համակարգի խնդիրների նկատմամբ:

Քաղաքական գիտության մեջ քաղաքական մշակույթի ձևավորման համար որպես հիմք դիտարկում են *կողմնորոշումները* դեպի քաղաքական համակարգը և նրա բաղկացուցիչ մասերը: Առհասարակ, մեր մոտեցմամբ, *քաղաքական մշակույթն ընդհանուր առմամբ դիտարկվում է որպես քաղաքական գործունեության հիմք և ըստ այդմ որոշում է քաղաքական գործունեության բնույթը՝ քաղաքականության ոլորտում հանդես գալով որպես հասարակական գիտակցության խտացված արտահայտություն կամ խմբային պատմական փորձի դրսևորում*: Որպես քաղաքական գործունեության հիմք՝ այն որոշում է այդ գործունեության առանձնահատկությունը, զարգացման մակարդակը՝ դրսևորվելով նաև որպես վարքագծի ձև: Ամերիկյան քաղաքագետ Գաբրիել Օլմոնդի՝ «քաղաքական մշակույթ» եզրույթը գիտական շրջանառության մեջ ներդնելու նպատակն էր մեկ հասկացության միջոցով քաղաքական կողմնորոշումները (արժեքները), ազգային բնավորությունը, մշակութային միջավայրը, քաղաքական փորձը, գիտելիքները ներկայացնել որպես վերաբերմունք քաղաքականության և քաղաքական համակարգի նկատմամբ: Ամերիկյան քաղաքագետները առանձնացնում էին ոչ միայն քաղաքական համակարգի ձևական կառուցվածքը, այլև քաղաքական համակարգի նկատմամբ սուբյեկտիվ

[7] Տե՛ս **Шюц А.** Некоторые структуры жизненного мира // "Личность. Культура. Общество". Вып. 2 (36). М., 2007, էջ 52–68:

կողմնորոշումը, որն իր բոլոր դրսևորումներով անվանվեց քաղաքական մշակույթ[8]: Քաղաքական մշակույթի առաջին հայեցակարգի հեղինակներ Գաբրիել Օլմոնդը և Սիդնեյ Վերբան *որպես բաղադրատարր առանձնացրել են քաղաքական կողմնորոշումների երեք մակարդակներ:*

Առաջին մակարդակը կոգնիտիվ (ճանաչողական) կողմնորոշումներն են, որոնք ներառում են մարդու գիտելիքներն ու կարծիքները քաղաքական համակարգի, նրա գործառույթների, դերի և այն կրողների, ինչպես նաև մուտքերի և ելքերի մասին: Ճանաչողական բաղադիրչը ենթադրում է քաղաքացիների կողմից քաղաքական շահերի տարբեր մակարդակների, երկրի սահմանադրության և օրենքների, հիմնական քաղաքական կուսակցությունների և հասարակական-քաղաքական այլ ուժերի ծրագրային դրույթների, ձևավորված քաղաքական հարաբերությունների իմացություն և ըմբռնում:

Երկրորդ մակարդակը հուզական (աֆեկտիվ) կողմնորոշումներն են, որոնք ներառում են զգացմունքային վերաբերմունքը քաղաքական համակարգի, նրա գործառույթներն իրականացնող սուբյեկտների՝ գործիչների նկատմամբ, որոնք ապահովում են քաղաքական ինստիտուտների աշխատանքը:

Երրորդ մակարդակը գնահատման կողմնորոշումներն են, այսինքն՝ քաղաքական համակարգի, նրա դերի և գործառույթի վերաբերյալ կարծիքները, դատողությունները և պատկերացումները, որոնք հիմնված են արժեքային չափանիշների վրա: Այս մոտեցման կողմնակիցները գտնում են, որ քաղաքական մշակույթը կարելի է մեկնաբանել որպես քաղաքականության սուբյեկտիվ հոսք, որը կարևորում է քաղաքական որոշումները, ընդունելով դրանց նշանակությունը և առանձնահատկությունը՝ կարգավորում է հասարակական ինստիտուտները և անհատական գործողություններին տալիս է սոցիալական իմաստ[9]: Այսինքն՝ քաղաքական մշակույթը դիտարկվում է որպես քաղաքական գործունեության նկատմամբ կողմնորոշումների (արժեքների) համակարգ, որը կանխորոշում է գործողության ուղղության ընտրությունը: Նման մոտեցումներ են զարգացնում նաև այլ հետազոտողներ[10] օրինակ՝ ըստ լեհ *քաղաքագետ Յժի Վյատրի՝ քաղաքական մշակույթը վարքագծի, արժեքների, դիրքորոշումների ամբողջություն է, որը վերաբերում է իշխանության և քաղաքացիների միջև փոխադարձ հարաբերություններին:*

---

[8] Տե՛ս **Almond G.,** Comparative Political System. Journal of Politics, 18 (August), 1956, **Almond G., Verba S.,** The Civil Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. Princeton Univ. Press, 1963, **Pye L.W., and Verba S**. (eds.), Political Calture and Political Devlopment. Princeton Univ. Press, 1965:

[9] Տե՛ս **Almond G., Verba S.,** The Civil Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. Princeton Univ. Press, 1963, P. 13-14, **Devine D.,** The political culture of United States. Boston, 1972, էջ 3:

[10] Տե՛ս **Вятр Е.** Социология политических отношений. М., 1979, էջ 151, **Мальцев В. *А***. Основы политологии. М., 1998, էջ 363:

Սակայն պետք է նշել, որ քաղաքական մշակույթի հայեցակարգի զարգացմամբ որոշակիորեն բարդացավ կողմնորոշումների կառուցվածքի վերաբերյալ պատկերացումը: Դա պայմանավորված է նրանով, որ քաղաքական մշակույթը կարելի է դիտարկել երկու մակարդակով: Խնդիրն այն է, թե *ինչը պետք է ընդունել որպես վերլուծության միավոր:* Հետազոտողների մի մասը որպես այդպիսին դիտարկում է «համակարգային մակարդակը», այսինքն՝ խոսքը քաղաքական մշակույթի՝ որպես ժողովրդի կոլեկտիվ կողմնորոշման համակարգի մասին է: Մյուսները շեշտը դնում են անհատի «սուբյեկտիվ կողմնորոշումների» ուսումնասիրման վրա: Օրինակ՝ Գ. Օլմոնդը և Ջ. Պաուելը, բնութագրելով քաղաքական մշակույթը որպես անհատական դիրքորոշումների և կողմնորոշումների ամբողջություն, դրանցում առանձնացնում էին ճանաչողական (քաղաքական օբյեկտների և իդեաների վերաբերյալ ճշմարիտ և կեղծ գիտելիքներ), արդյունավետ (քաղաքական օբյեկտների նկատմամբ կապերի, ընդգրկվածության կամ հակագործողությունների, հակադրության զգացողություն) և գնահատման կողմնորոշումներ, այսինքն՝ քաղաքական օբյեկտների վերաբերյալ դատողություններ և կարծիքներ[11]:

Քաղաքական մշակույթի առավել լայն մեկնաբանման կողմնակից ամերիկյան քաղաքագետ Ուոլտեր Ռոզենբաումը տարանջատում է այն կողմնորոշումները կամ բաղադրիչները, որոնք հիմնային դեր ունեն հասարակության քաղաքական մշակույթի ձևավորման մեջ՝ դրանք նույնպես բաժանելով երեք խմբի: Ընդ որում, ըստ նրա՝ քաղաքական մշակույթի կառուցվածքը հենց կողմնորոշումների կառուցվածքն է: Առաջին, կողմնորոշումներ կառավարչական կառույցների նկատմամբ՝ սուբյեկտիվ վերաբերմունք քաղաքական ռեժիմի, պետական կառավարման ինստիտուտների, խորհրդանիշների, նորմերի և պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ, այսինքն՝ կողմնորոշումներ, որոնք կապված են քաղաքական համակարգի մուտքերի և ելքերի հետ:

Երկրորդ, քաղաքական ինքնանույնականացում, անհատի պատկանելությունը որևէ քաղաքական միավորի՝ ազգի, պետության, կուսակցության և այլն, քաղաքական հավատը, սուբյեկտիվ նախապատվությունները:

Երրորդ, քաղաքական կողմնորոշումներն ըստ քաղաքական իրազեկության (մասնակցությունը քաղաքական կյանքին) և քաղաքական արդյունավետության քաղաքական գործընթացների վրա ազդելու հնարավորությունն է[12]:

Ռուս քաղաքագետ Էդուարդ Բատալովը քաղաքական մշակույթի

---

[11] Տե՛ս **Алмонд Г., Пауэлл Дж., Стром К., Далтон П.** Сравнительная политология сегодня. Мировой обзор. Учебное пособие. М., 2002, էջ 224:

[12] Տե՛ս **Rosenbaum W**., Political Culture. N. Y., 1975, էջ 142:

կառուցվածքում առանձնացնում է քաղաքական կողմնորոշումների չորս հիմնական խմբեր, որոնք, մեր կարծիքով, քիչ են տարբերվում ամերիկյան քաղաքագետների մոտեցումներից:

Ինչպես արդեն նշել ենք, քաղաքական մշակույթը բարդ, բազմատարր համակարգ է, որը ներառում է քաղաքական կողմնորոշումների ենթահամակարգերը: Դրանք, ամբողջությամբ վերցրած, տարբերվում են հասարակության քաղաքական մշակույթից: Ժամանակակից քաղաքական գիտության մեջ ընդունված է դրանք անվանել *քաղաքական ենթամշակույթներ*:

Մարդը՝ որպես սոցիալական էակ, չի պատկանում ընդհանրապես վերացական հասարակությանը: Նրա սոցիալականությունը մշտապես իրացվում է կոնկրետ հանրույթներում՝ ընտանիքում, բակային ընկերակցությունում, դպրոցական ընկերակցության շրջապատում, աշխատանքային կոլեկտիվում, մասնագիտական խմբում և այլն: Եվ յուրաքանչյուր այդպիսի ընդհանրության բնորոշ են իրենց համապատասխան նորմերը, արժեքները, ավանդույթները, լեգենդները և հերոսները, հաճախ նաև՝ լեզուն և ժարգոնը:

Մշակույթը միշտ ներկայացվում է ոչ թե որպես միաձույլ, այլ բազմաշերտ, բազմաձալ միասնություն, որը հագեցված է սովորույթների, ավանդույթների յուրահատկություններով: Մարդիկ միշտ մտնում են ինչ-որ մասնագիտական, տարիքային, կրոնական և այլ համակեցությունների կամ միությունների մեջ՝ ձևավորելով որոշակի «ենթամշակույթներ»: Ենթամշակույթները, հանդես գալով որպես հասարակության և անհատի միջև միջանկյալ օղակ, ազդում են մարդու գիտակցության, նրա հուզական կյանքի վրա: Այդ գործընթացում հսկայական դեր են խաղում կերպարները, անձնական օրինակը, նմանակումը, որոնք որոշակի պատկերացում են ձևավորում հասանելիության և անհասանելիության, ճշմարիտի և ոչ ճշմարիտի, արդարության և անարդարության, ազնիվի և անազնիվի վերաբերյալ և այլն:

Ուշադրության արժանի են նաև այլ մոտեցումներ, որոնք շոշափում են քաղաքական մշակույթի կառուցվածքային հիմնախնդիրները: Այսպես, ռուս հետազոտող Վ. Ա. Տիխոնովի կողմից առաջարկված քաղաքական մշակույթի հիմնային ձևի «կոորդինատների համակարգի» այլընտրանքային կառուցվածքը բաժանված է երկու մեծ խմբերի՝ *ինստիտուցիոնալային* (իրավական հաստատություններ, պետական կառուցվածքի ձևեր, խորհրդանիշներ) և *ոչ նյութական* կամ *ոչ ինստիտուցիոնալացված* (ավանդույթներ, առաջնորդների խարիզմա, կոնֆլիկտների լուծման ընդունված եղանակներ և այլն)[13]:

Պետք է նշել, որ մինչև այժմ պարզ պատկերացում չկա քաղաքական

[13] Տե՛ս **Тихонова В. А.** Политическая культура российского общества: социально-филиософский аспект: Монография. М., 2001, էջ 112:

մշակույթի կառուցվածքում կրոնական բաղադրիչների ընդգրկման նպատակահարմարության վերաբերյալ: Եթե քաղաքագետ Կ. Ս. Հաջիևը առաջարկում է կրոնը դիտել որպես քաղաքական մշակույթի բաղադրատարրերից մեկը[14], ապա Վ. Ֆ. Պենկովի համար կրոնական բաղադրիչի ընդգրկումը քաղաքական մշակույթում հնարավոր է միայն այն ժամանակ, երբ խոսքը քաղաքական մշակույթի դավանանքային մոդելի մասին է[15]:

Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ, չնայած քաղաքական մշակույթի կառուցվածքի վերաբերյալ ներկայացվող տարբերակների բազմազանությանը, առկա է մի ընդհանուր մոտեցում, ըստ որի՝ քաղաքական մշակույթի հիմնական և համալիր բաղադրիչներ են քաղաքական գիտակցությունը, զգացմունքային-հոգեբանական տարրերը, քաղաքական վարքը, քաղաքական ինստիտուտները:

Քաղաքական մշակույթի՝ համընդհանուր ճանաչում գտած կառուցվածքային բաղադրատարրերը

Ընդհանուր մոտեցմամբ քաղաքական մշակույթն ընդգրկում է մի շարք կառուցվածքային բաղադրատարրեր՝ ***քաղաքական փորձը, քաղաքական գիտակցությունը, քաղաքական ինստիտուտները, քաղաքական վարքը, քաղաքական խորհրդանիշները*** և այլն:

Քաղաքական մշակույթի զարգացման հիմքը *քաղաքական պատմական փորձն է*, որը, հանդես գալով որպես պատմական զարգացման արդյունք, ամրագրում է քաղաքական հարաբերությունների զարգացման պատմությունը ամենատարբեր ձևերով: Քաղաքական փորձն ամենից առաջ մեզ է հասել քաղաքական փաստաթղթերի, ավանդույթների, ինչպես նաև տարբեր մտածողների աշխատությունների շնորհիվ:

Քաղաքական գիտակցությունը մարդկանց քաղաքական գաղափարների, գիտելիքների, համոզմունքների, պատկերացումների, արժեքների, կարծիքների, դիրքորոշումների համակարգ է, որի հիման վրա մշակվում են քաղաքական համակարգի և դրանում մարդկանց տեղի ու դերի վերաբերյալ առավել կայուն և նշանակալի քաղաքական կողմնորոշումներ: Քաղաքական գիտակցությունը կոնկրետ պատմական է և արտացոլում է տվյալ երկրի մարդկանց շահերը՝ որոշակի տնտեսական և հոգևոր զարգացման մակարդակով[16]:

Քաղաքական գիտակցությունում առանձնացվում են գաղափարական և զգացմունքային-հոգեբանական բաղադրիչներ:

---

[14] Տե՛ս **Гаджиев К. С.** Политология: Учебник для высших учебных заведений. М., 2004, էջ 334:

[15] Տե՛ս **Пеньков В. Ф.** Политический процесс и политическая культура. М., 2000, էջ 78:

[16] Տե՛ս **Матусевич В.** Политическая культура: теоретико-методологические проблемы исследования // "Социология: теория, методы, маркетинг", 1998, № 4-5:

1. Գաղափարական բաղադրիչն իր հերթին ներկայացվում է քաղաքական գիտելիքի, քաղաքական արժեքների, քաղաքական համոզմունքների միջոցով:

2. Քաղաքական գիտելիքը քաղաքականության, քաղաքական համակարգի, քաղաքական զանազան գաղափարախոսությունների, այն արժեքների և ընթացակարգերի վերաբերյալ մարդկանց գիտելիքներն են, որոնց օգնությամբ ապահովվում է մարդկանց մասնակցությունը քաղաքական գործընթացին:

Քաղաքական արժեքները քաղաքական կյանքի, քաղաքական նպատակների վերաբերյալ բարոյական և նորմատիվային դատողություններն են, որոնց իրացմանն է ուղղված քաղաքական գործունեությունը: Քաղաքական արժեքներ են օրինականությունը, հասարակական կարգավորվածությունը, համակարգի կայունությունը, սոցիալական արդարությունը և այլն:

Քաղաքական համոզմունքները պատկերացումների ամբողջություն են, որոնք բնութագրում են անհատի քաղաքական իդեալը, պատկերացումն այն մասին, թե ինչպիսին պետք է լինի քաղաքական համակարգը:

Զգացմունքային-հոգեբանական բաղադրիչն իր հերթին ներկայացվում է մարդկանց կողմնորոշումների և դիրքորոշումների միջոցով, այն է՝ կողմնորոշում քաղաքական ինստիտուտներին և կառույցներին, նորմատիվային համակարգին, քաղաքական իրադարձություններին, առանձին քաղաքական դերերին և այլն: Ինչպես արդեն նշել ենք, քաղաքագետները (Գ. Օլմոնդ, Ս. Վերբա, Ջ. Պաուել, Ու. Ռոզենբաում, Է. Բատալով և այլք) փորձել են ներկայացնել, համակարգել քաղաքական-մշակութային կողմնորոշումները:

Քաղաքական գիտակցությունն ընդգրկված է քաղաքական մշակույթում ոչ միայն պատկերացումներով՝ հիմնված զգացմունքների, ավանդույթների, հայացքների և գաղափարների վրա, որոնք համապատասխանում են կոնկրետ ժամանակային սահմաններին և ժողովրդի արժեհամակարգին: Այն նաև արտացոլված է քաղաքական դիրքորոշումներով, որոնք տարբերակում են սոցիալական այս կամ այն խումբը: Դեռ ավելին, քաղաքական դիրքորոշումները (մարդկանց վերաբերմունքը քաղաքական երևույթների նկատմամբ) քաղաքական մշակույթի կարևորագույն բաղադրիչ են:

Քաղաքական ինստիտուտներն ընդգրկում են պետության քաղաքական համակարգը, քաղաքական կուսակցությունները և շահերի խմբերը, քաղաքական որոշումների ընդունման ընթացակարգերը, քաղաքացիական հասարակության քաղաքական ինքնակազմակերպումը:

Քաղաքական վարքը մարդու պրակտիկ փոխազդեցությունն է քաղաքական միջավայրի հետ, որն այս կամ այն կերպ արտահայտվում է

քաղաքական մասնակցության ձևերում, պայմանավորվում է մասնագիտական քաղաքական գործունեությամբ, ավանդույթներով, իրավաօգտագործման ընթացիկ խնդիրներով, կոնֆլիկտների լուծմամբ և այլն:

Առհասարակ քաղաքական մշակույթը մարդուն բնութագրում է ոչ միայն որպես քաղաքական հայացքների, գաղափարների, տեսությունների ստեղծող ու կրող, այլև իրական, պրակտիկ գործող, քաղաքական կյանքի և իրադարձությունների գործուն մասնակից: Հետևաբար, քաղաքական մշակույթը գոյություն ունի ինչպես սերունդների կուտակած քաղաքական փորձի ձևով, այնպես էլ քաղաքական պրակտիկ գործունեության ձևով՝ որպես այդ գործունեության որակական բնութագրում:

Քաղաքական մշակույթի կառուցվածքային բաղադրատարրերին անդրադառնալիս պետք է նկատի ունենանք, որ այդ ձևերին համապատասխանում է, մի կողմից, քաղաքական փորձի կառուցվածքային վերլուծությունը, որը մարմնավորվում է քաղաքական մշակույթի արժեքներում, նորմերում և սոցիալական ու քաղաքական ինստիտուտներում, որ կոչված են նրա տարածման ու զարգացման համար, մյուս կողմից՝ քաղաքական մշակույթի տիրապետման գործընթացը: Այս գործընթացն ընդգրկում է երեք փուլ՝ ա) ճանաչողական (գիտելիքների տիրապետում, քաղաքական մտածողության ձևավորում և այլն), բ) այդ գիտելիքները քաղաքական համոզմունքների ու կողմնորոշումների վերափոխում և գ) մարդկանց սոցիալ-քաղաքական գործունեության ընթացքում այդ գիտելիքների ու համոզմունքների իրացում:

Քաղաքական մշակույթի գոյության այս ձևերի և դրանց բաղադրատարրերի առանձնացումը շատ դեպքերում պայմանական է: Քաղաքական գործընթացներում տեղի են ունենում քաղաքական մշակույթի զարգացում, քաղաքական փորձի հարստացում, հանդես են գալիս նոր արժեքներ, նորմեր և քաղաքական ինստիտուտներ:

Ամփոփում

Քաղաքական մշակույթը իրացվում է մի քանի մակարդակներով՝ որպես ազգային քաղաքական մշակույթ, որպես տարածանաշրջանային քաղաքական մշակույթ և որպես քաղաքական ենթամշակույթներ, որոնք տարբերվում են ամենից առաջ մարդկանց քաղաքական հայացքներով, համոզմունքներով և նպատակներով:

Քաղաքական տեսանկյունից առավել նշանակալի են որոշ մասնագիտական ենթամշակույթները (բիզնեսը, բյուրոկրատիան, զինվորականությունը, գիտական-փորձագիտական միավորումները), տարիքայինը (երիտասարդությունը, վետերանները և թոշակառուները): Նրանց նշանակությունը սահմանվում է ինչպես ընտրական հնարավորություններով, այնպես էլ սոցիալական կապիտալի այլ ձևերով: Իր ա-

ռանձնահատկությունն ունի նաև քաղաքական վերնախավի ենթամշակույթը, որը երբեմն իր կենսակերպով (բնակության վայրով, հանգստի ձևերով, կրթական կարգով և այլն) առանձնանում է ընդհանուր սոցիումից:

Հասարակության մշակույթի ամբողջական համակարգում քաղաքական փորձը հատուկ դեր է խաղում՝ ապահովելով այդ համակարգի ամբողջականությունը: Այս իմաստով քաղաքականությունը ինչ-որ առումով նման է բժշկությանը: Այնպես, ինչպես բժշկության նպատակն է ապահովել օրգանիզմի առողջությունը (ամբողջականությունը), քաղաքականության նպատակն էլ սոցիումի (հասարակական «օրգանիզմի») առողջության (ամբողջականության) ապահովումն է: Հետևաբար, քաղաքականությունը ոչ միայն սոցիալական մշակույթի ենթահամակարգերից է, այլև նրա համակարգակազմող սկզբունքներից մեկը:

Այսպիսով, քաղաքական մշակույթի վերլուծության և ուսումնասիրության մեջ կարևոր են ոչ միայն վարքագծում արժեքային կողմնորոշումները, այլև քաղաքական մշակույթի բնույթի մեջ անհրաժեշտ է հաշվի առնել նաև նրա կառուցվածքային բաղադրիչները՝ քաղաքական փորձը, քաղաքական գիտակցությունը, քաղաքական ինստիտուտները, քաղաքական վարքը, քաղաքական խորհրդանիշները և այլն: Եվ առհասարակ, ինչպես տեսական վերլուծություններում, այնպես էլ պրակտիկ դրսևորումներում պետք է նկատի ունենալ քաղաքական մշակույթի բաղադրիչների և քաղաքական համակարգի փոխներթափանցումների դերն ու կարևորությունը:

Բանալի բառեր – *քաղաքական մշակույթ, քաղաքական համակարգ, կողմնորոշումներ, քաղաքական փորձ, քաղաքական գիտակցություն, քաղաքական ինստիտուտներ, քաղաքական վարք, քաղաքական խորհրդանիշներ*

ЛЮДВИГ ВАРДАНЯН – *Заметки о структуре политической культуры.* – К основным направлениям политологии принадлежат исследования политической культуры, отражающей уровень политических знаний, ориентаций, оценок, духовных ценностей и норм. Сущность политической культуры в большинстве случаев зависит от её структуры, которая формируется под воздействием тех или иных факторов в области политики. В статье рассматриваются компоненты, составляющие эту структуру: политический опыт, политическое сознание, политические институты, политическое поведение, политические символы. Проанализированы также ориентиры – неотъемлемый элемент политической культуры, поскольку в основе самоидентификации человека и его ориентации в политике лежат его антропологические (включая мировоззренческие) характеристики. В этом плане политическую культуру могут представлять как рациональные, так и иррациональные компоненты.

Ключевые слова: *политическая культура, политическая система, ориентации, политический опыт, политическое сознание, политические институты, политическое поведение, политические символы*

LYUDVIG VARDANIAN – *Observations on the Structure of Political Culture.* – Political culture, which reflects the level and essence of political knowledge, orientations, assessments, and actions of people, the content and peculiarities of spiritual values, events and norms, is considered as one of the main directions of political science research. The essence of a political culture in most cases depends on its structure, which is formed under the influence of certain components determining the value-essence activities of people in the sphere of politics.

The article examines different components of the structure of political culture: political experience, political consciousness, political institutions, political behavior and political symbols. An attempt has been made to consider cues as an integral part of political culture, taking into account the fact that anthropological (including ideological) characteristics underlie a person's self-identification and his orientations in politics, and in this sense, political culture can be represented by rational and irrational components.

Key words: *political culture, political system, orientations, political experience, political consciousness, political institutions, political behavior, political symbols*